

2/10/5/2

2/10/5/2 unu Stijer/24

1909

391.99

G-23

18 NOV 2011

5-39

ԵԹԻՄԻ ԱՍԱԾՆԵՐԻՑ

Ասող չկա խրատող չկա
ինչ ուզում են էն են անում:

Հեղինակություն և հրատարակություն

ԵԹԻՄԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Մ. Ռոտ/մեանցի:

1909

891.99

15-23

391.99


6-23

ԵԹԻՄԻ ԱՍԱԾՆԵՐԻՑ

Ասող չկա խրատող չկա
ինչ ուզում են էն են անում:

Հեղինակություն և հրատարակություն

ԵԹԻՄԻ



ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի:

1909

ՀԻՄՆԻԿԻ ԱԽԱԼԻ ՄԱՐԿԱՆԵՐԸ:

Ասող չկա խրատող չկա
ինչ ուզում են էն են անում:

Որ մէկն ասեմ համբարը չունի ինչ որ հիմա բան են անում,
Մեծ ու պստիկ խնձորի տեղ ջիբիցը բոմբեր են հանում,
Օրը ցերեկ մէջ քուշումը անցող դարցողին են թաղնում,
Թէ մի ծպուտ ձեն է հանի տեղն ու տեղնեւտ են սպանում,
Տեսնողները հեռանում են իրանց ահու ձեն չեն հանում,
Ջարմանում եմ թէ էս բանը հարաւ սնց են ջուրաթ անում,
Հարուստ մարդկերանց որդոցը բռնում են գերի են տանում,
Նամակներով փող են ուզում էսպէս զալաթներ են անում,
Էստուց զուլում բան կտեսնես դու էս ինչու ես զարմանում,
Մենակ էստեղ չգիտենաս ուրիշ տեղ վատթար են անում,
Որ մէկն ասեմ համբարը չունի ինչ որ հիմա բան են անում,
Մեծ ու պստիկ խնձորի տեղ ջիբիցը բոմբեր են հանում:

Էս մի քանի տարի առաջ ինչ գուզես չբաշարեցին,
Խան ինչ արին խան ինչ շարին ոչնչով չբեղաբեցին,
Էնքան արին վերջը թուրքին հայու հետ գուշման չինեցին,
Երկուսն էլ իրարու գիպան նահախ տեղ արին թափեցին,
Մէյդանը կրակովը տուին բոլորի շուրը բանդեցին,
Խալխը մտաւ Սուրբ Գէորգը դռները դայիմ կողպեցին,
Խալաթովի քարվանսիցը հակներով ապրանք թաղնեցին,
Էնքան տարուա աշխատանքը ջիլղղան ոտի հետ հաւտեցին,
Ափսոս իմ գողալ քաղաքը որ էս օրումը գցեցին,
Սաբարոց տունը կրակ ընկնի որ էս կրակներ չաղ են անում,
Որ մէկն ասեմ համբարը չունի ինչ որ հիմա բան են անում,
Մեծ ու պստիկ խնձորի տեղ ջիբիցը բոմբեր են հանում:

Էրեզ լաւ էր բանց թէ Էստէ Էրուցա բանը չեմ գիտի,
Կուլի Էրուց վատթար ըլլէ դեռ չտեսած ով ինչ գիտի,
Ինսանս գազան է դառնել սրանից, բեթար էլ ինչ պիտի,
Թողնում չի աշխատաւորին աշխատի մի թիբ հաց ուտի,



1908-91

Թէ օրէց օր էսէնց զնա մարդ պիտի չարա պտրտի,
Թէ չէ վերջը կփռչմանի էս իմ խօսքը պահի մտի,
Իմ խոսալը իցուր տեղա ասողին էլ լսող պիտի,
Ես իմ բաղի դարդը քաշեմ ում բալն ուզումա կարկտի,
Մինչի էսօր ես էստունցով զարարն աւել բան չեմ գտի,
Զուով դուշմներ եմ չաղ արի ինչու խաթրու չեմ իմանում,
Որ մէկն ասեմ համբարը չունի ինչ որ հիմա բան են անում,
Մծ ու պտիկ խնձորի տեղ ջիբիցը բոմբեր են հանում:

Բաղի մարդ կա առաւօտից մինչի մութը մի գլուխ բանում,
Համ իր քուլփաթուն է պահում համ իր բանն է եօլա տանում,
Սրա սպանող թաշնող ինսանը եարաբ թէ ոնց է զնջանում,
Քուլփաթներուն քաղցած թողնում մարդ ասէ ինչ է փիրր անում,
Նա խոմ էնգով չի շենանա էս ինքն էլ լաւ է իմանում,
Որ էսպէս մի մարդ ասէ էլ ինչու է զուր տեղ սպանում,
Գիտենա որ նա Յուդայից աւելի մեղք բան է անում,
Որ իր կերպի ստեղծւած մարդու տնով տեղով բաթմիշ անում,
Հաւատացէր մինչի էսօր ես էս բանը չեմ իմանում,
Թաք գիտենամ թէ ինչուցա շատ փայն էս են հաւանում,
Որ մէկն ասեմ համբարը չունի ինչ որ հիմա բան են անում,
Մեծ ու պտիկ խնձորի տեղ ջիբիցը բոմբեր են հանում:

Արարիչ Տէր, Դու պատիժ տաս էնպիսի գազան ինսանի,
Բարակ ցաւը պցես ջանը ջիզարը քարուքանդ անի,
Անդումանդ ըլի չերեւա արժան չի գերեզմանի,
Ոչ ճաշակի ոչ պատանքի ոչ էլ տէրտէրի թաղմանի,
Գիտենա որ էլ կանիծեմ մինչի օր թորա չի անի,
Մեացածն էլ կթամամ անեմ թէ բան պակաս է մի բանի,
Թամամ անես թամամ շանես զրանով չես կարող բան անի,
Դու քո գլխի գարգը քաշի խելքիդ աւել զոռ մի անի,
Ինչ գուգէ շատ էլ անիծես նա էլի իրանը կանի,
Ասող չկա խրատող չկա ինչ ուզում են էն են անում,
Որ մէկն ասեմ համբարը չունի ինչ որ հիմա բան են անում,
Մեծ ու պտիկ խնձորի տեղ ջիբիցը բոմբեր են հանում:

Նթիմ:

ՏԵՐՏԵՐԻ ՄԱՐԻՖԵԹԸ

Մի օր յանկարծ հիւանդացա,
Տանու տէրտէրիս կանչեցի,
Երբ ներս եկաւ ողջոյն տեց,
Աչն առա համբուրեցի:
Խնդրեցի որ ինձ ճաշակի,
Մի ջուտիս իստակ մոմ վառեցի,
Կողքիս նստեց խոստովանեց,
Ունեցածս բաց յայտնեցի:
Թուղթ ուղեցի երկու թապաղ,
Մէկս մէկու հետ կարեցի,
Նստա ինձ ու ինձ փիրր արի,
Անդերձս ձեռովս զրեցի:
Որուն շատ տեցի որուն քիչ,
Տէրտէրիս էլ չզրնեցի,
Ստուիս եաշիկը դուրս քաշի,
Նրան էլ մի բան ժամուց տեցի:
Ասի տէրտէր ջան ձեռք քաշի,
Անդերձս առաջը դրեցի,
Կարգաց թէ չէ դաւի սարքեց,
Ինչու իրան փայ շուեցի:
Ասաց չէ որ խաթրուտ համար,
Ճաշս պատրաստած թողեցի,
Էս չորումը յէթյէթալով,
Եկա քեզի ճաշակեցի:

Մինչ էստեղ ոտով եմ եկել,
 Մի ֆայտոն էլ չճարեցի,
 Զիրիս բռնոթու դուրի կար,
 Էն էլ ճամփումը կորցրեցի:
 Կիսա ճամփիցը յետ դառա,
 Պոլիցէն մտա յալտնեցի,
 Ափսոս իմ բռնոթով դուրիս,
 Իժուժ ինչ էսօր լրցրեցի:
 Խան ինչ ասեց խան ինչ չասեց,
 Զահլէս տարաւ բեղարեցի,
 Ասի էս ինչ խաթէն ընկա,
 Քիչ մնաց ատուկատ կանչեցի:
 Անդերձս ձեռիցը առա,
 Տաս չորս կտորի ճղեցի,
 Որ տեսա էլ չարա չկա,
 Մի փարաջի փող բախեցի:
 Անշաղ գլխիցս ապա արի,
 Գալու սհաթը անիծեցի,
 Էսպիսի բան չէի տեսել,
 Էս էլ խոմ տեսա փորձեցի:
 Մի դամ ճաշակելու խաթրու,
 Էսքան ջառիմեն քաշեցի,
 Գիտենա բէարուռ կանեմ,
 Թէ մի թայնա տեղ ճանդեցի:
 Պէտկ է մի էծ մատաղ անեմ,
 Որ էս խաթից աղատուեցի:

Եթիմէ

ՀՈՒՂԸ ԳՅՈՂԻ ԳԼԽԻՆ ԵԿԸՆ ՕՅԻՆԸ:

Իմ խոսալը իզուր տեղա
 Արեւ ես ու էլի կանես:

Տօ բէուղուփ քեզ ով ասաւ դալը ոսկիքը խուրդա անես,
 Քեզ համա դեռ էտ էլ քիչ է չունքի փողին թամաճ կանես,
 Թէ պիտի որ գու համաշա էտպէս դառափուրթին անես,
 Լաւ կանես որ բոլորովին փէշակից ձեռը վեր առնես,
 Զուշէրդ ծախես ծախսես ջլիղդան գլխիցդ բազ անես,
 Աւելի յետենն չնկնես ինչ որ տան ձեռդ դեմ անես,
 Նստես քեզ համա արխէին դառափի դուբան բաց անես,
 Ոչ աւելի խաբջ կունենաս թանխեն էլ քիչ կբանդ անես,
 Համ մէկին մէկ փող կաշխատես թէ միշտ էտպէս խուրդա կանես,
 Համ էլ քեզ էլ դառափ կասեն դրանից լաւ բան էլ ինչ կանես,
 Տօ բէուղուփ քեզ ով ասաւ դալը ոսկիքը խուրդա անես,
 Քեզ համար դեռ էտ էլ քիչ է չունքի փողին թամաճ կանես:

Վայ էն օրին ինչ օրը որ նստած էիր դուքնիդ դռանը,
 Երկու ժուլիկ մարդ մօտ եկան թամամ գիւղացոց նմանը,
 Մէկը մի հատ ոսկի շանց տուց ասաց աղա սա չէ բանը,
 Սրանից քսան հատ էլի ունենը, թաղա կտրած պլպլանը,
 Մենակ իմս չգիտենաս կէսը իմս է կէսը սրանը,
 Խուրդա կանես կպակսեցնենք վաղն երթալու ենք տանը,
 Թխտի փողը հեշտ կպահենք քան թէ ոսկին չխշխկանը,
 Վախնանս ճանփին չթալանեն ման են գալի շատ քանց շանը,
 Ասիր գիշերովս բերեք կերթանք խուրդա կանեմ տանը,
 Նստար քեզ ու քեզ փիքը արիր չորս բուրլից պակաս վեր առնես,
 Տօ բէուղուփ քեզ ով ասաւ դալը ոսկիքը խուրդա անես,
 Քեզ համա դեռ էտ էլ քիչ է չունքի փողին թամաճ կանես:

Մութը ընկաւ ոսկին բերին գնացիր զանդուկդ բաց արիր,
Մի գաստա բիլեթ փող հանար ասիր բեր ոսկիդ համբարիր,
Ասաց ազա ցաւդ տանեմ էս մի խնդիրքս էլ կատարիր,
Տաս թումնի էլ մանդրա ունենք էն էլ վերցրու մի բանդ անիր,
Բեր քո փողը ու մեր ոսկին քո զանդկումը կողպենք պահիր,
Բանալիրը մեզ տուր տանենք մինչ մեր զալն էլ մոմ վառիր,
Կերթանք էն էլ շուտ կրեւենք, ոսկու հետ մի տեղ համբարիր,
Բանալիրը տւիր էլ հետ շեկան ոսկիքն էլ բեզ մնաց փիքը արիր,
Ջանդուկդ կոտրեցիր տեսար ոսկու տեղ զիզի պիզ բանիր,
Խան դէս ընկար խան դէն ընկար չէիր գիտում թէ ինչ անես,
Տօ բէուզուփ քեզ ով ասաւ դալը ոսկիքը խուրդաւ անես,
Քեզ համա դեռ էտ էլ քիչ է շունքի փողին թամաս կանես:

Չուշա գցող քեզ եմ ասում դու էլ զառափութին շանես,
Ինչ որ գլխիդ բան անցկացաւ չմոռանաս միտդ սլահես,
Թէ խելք ունես ինձի լսի թէ չէ էլի կփռմանես,
Թագադան էլ օլին չգան մնացածն էլ չթամամ անես,
Գիտենաս որ շես փռմանի սր էլի քո փեշակն անես,
Ալմասդ ձեռից չթողնես դրանով քեզի եօլա աանես,
Դուքնիդ վրա մուղալիթ կենաս քո շուշերուդ դուլուդ անես,
Գնացած բանին ֆայդա չկա ինչ գուզէ շատ էլ փիքը անես,
Էտ քեզի խրատ ուրիշ վախտը էլ էտպիսի դալաթ շանես,
Իմ խոսալը իզուր տեղաւ արել ես ու էլի նանես,
Տօ բէուզուփ քեզ ով ասաւ դալը ոսկիքը խուրդաւ անես,
Քեզ համա դեռ էտ էլ քիչ է շունքի փողին թամաս կանես:

Շ/ԹԻՄ:

ՀԱՂԱՔԱՐ ՄԱՐԴՈՒ ԱՐԱՑ ԲԱՆԵՐԸ

Առածու անիծածի որդի,
Մարդ չգտա քեզի դորթի.
Արժանի ես ունիմդ տան,
Մի ստակած սև կատուի մորթի:

Էն մարդու զագը չիմացար,
Եարար էգպէս ոնց կուրացար.
Էդ ինչ բան էր որ դու արիր,
Ստեղծողիդ ինչու ուրացար:

Փող ուղիր ձեռաց բաներիդ,
Բարաթ չառաւ էնպէս էրիդ.
Հաշա կերար էլ յետ չտւիր,
Մեծ ուտեաւ էգպէս խրատերիդ:

Դու էտումը շատ սխալուեցար,
Ուտիտ խրատը հաւանեցար.
Հաղարներով կճանկերի,
Ով ինչ անէ որ չտապեցար:

Էգպիսի բաներ անողին,
Էնպիսի մարդու խաբողին.
Պէտք է գիւաները ուտեն,
Որ էլ չարժանանա հողին:

Աստուած մարդու որ կորցնումա,
Դեռ առաջ յիմարացնումա.
Քու բանն էլ էնպէս եմ տեսնում,
Դա էլ Աստծու զուլումա:

Վերջ չկա արած բաներիդ,
Ասա ինչ է մնացել ձեռիդ.
Աստուած բարարէթ կտրելա,
Գողին բարարաթ ուկերիդ:

Քո մեղ չի ջինսդ էդպէսա,
Ձեր ջնսից լաւին չտեսա.
Մեծիցը մինչի պատիկը,
Ոնց մի մօրից ծնածի պէսա:

Ձեր ջինսը պէար է վերջանա,
Բալքամ բաղարը դնջանա.
Տամազլուդացուն վեր ընկնի,
Ոչ ծնւի ոչ էլ մեծանա:

Ախ ես ինչ ասեմ անորիդ,
Որ իր աղջկան քեզերիդ.
Լաւ կաներ որ տանն էր պահել,
Քան էն խեղճին զցեց ձեռիդ:

Եթիմ,

ԿՈՏՐ ԸՆԿԱԾ ՄԱՐԴՈՒ ԳԼԽԻՆ ԵԿԱԾ ՕՅԻՆԸ

Էն գլխիցն էլ նորար էի վերջը էլի նորար դառա,
Երեք չորս անգամ կոտրացա համա էլի մարդ չդառա,
Բեսար արի էս բանն արի ձեռիս չմնաց մի թար փարա,
Ջրի բերածը ջուրը տարաւ, վերջը խօսալու էլ դառա,
Էն օրիցը մինչի էսօր թրն եմ գալի ոնց աւարա,
Էլ ոչ մի տեղ երես չունեմ գլխիս վայ տալու դառա,
Էն գլխիցն էլ նորար էի վերջը էլի նորար դառա,
Երեք չորս անգամ կոտրացա համա էլի մարդ չդառա:

Մոսկովիցը ապրանք բերի, ֆաբրիկանտներուն խաբեցի,
Վեց ամիս ժամանակ առա, ասի էս էսա մարտեցի,
Ունեցածս չունեցածս եղբօրս անուանի շինեցի,
Հէնց գիտէլի լաւ բան արի, համա վերջը փոշմանեցի,
Ասա ինչու հէնց էն օրը, մի բաղնսի փող ուզեցի,
Ասեց գլխիցս ռադ էլի թէ չէ կանեմ փարչա փարա,
Էն գլխիցն էլ նորար էի վերջը էլի նորար դառա,
Երեք չորս անգամ կոտրացա համա էլի մարդ չդառա:

Որ տեսա էլ չարա չկա, ինձ ու ինձ ձէնս կտրեցի,
Դուլխս ռադ արի դուրս եկա, օրս ու ումրս անիծեցի,
Ասի էս ինչ բեսար արի, կենդանի գլուխս թաղեցի,
Ինչ ունէի ու չունէի, սրա պէս շան ձեռը զցեցի,
Քիչ էր մնացել գլուխս սպանեմ, համա էլի համբերեցի,
Ուշը ու միտքս մոլորվելա խօսալ ունեմ ծարա մարա,
Էն գլխիցն էլ նորար էի, վերջը էլի նորար դառա,
Երեք չորս անգամ կոտրացա, համա էլի մարդ չդառա:

Էն իմ բէհմուրադ ախպէրս տէս զլիսիս ինչ օյին արաւ,
Կնծումս խփեց դուրս արեց, դուքնիս տէրը ինքը դառաւ,
Նստեց իր համա արխէյին, էնքան ապրանքը տակն առաւ,
Ինքը թհար թհար է ուտում, ինձ կի թողեց քաղցած ծարաւ,
Ինչ որ ես ուրիշին արի, նա մի բան էլ աւել արաւ,
Մի մարդ չկա դարդս ասեմ, բալքամ դարդիս անէ չարա,
Էն զլիսիցն էլ նսրար էի, վերջը էլի նսրար դառա,
Երեք չորս անգամ կտտրացա, համա էլի մարդ չդառա:

Մի տարի պարապ ման եկա, անջադ վերջը մի տեղ ճարի,
Նորից էլի նսրար մտա, զիշեր ցերեկ դուլուդ արի,
Էստից էնտից մէ մէ գրոշով մի քանի շայի մողարի,
Անջադ հոգիս ազատեցի փռնշու պարտքը վճարի,
Էն է ու էն մինչի էսօր եղբօրս հետ էլ բարի չարի,
Էլ ինչ ֆայդա երբ որ էսքան խալիսի մէջ բէարուռ դառա,
Էն զլիսիցն էլ նսրար էի, վերջը էլի նսրար դառա,
Երեք չորս անգամ կտտրացա, համա էլի մարդ չդառա:

Եթիմ:

786

~~682~~

ՀՀ Ազգային գրադարան



NL0330817

28377